


09.08.2011

ՆՊԱՏԱԿԸ ԵՐԿՈՒ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՐՁՆԵԼ Է



Օրերս Արցախում էր գտնվում ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պատվիրակությունը՝ համակարգի ղեկավար Մանվել Բադալյանի գլխավորությամբ: Օգոստոսի 6-ին ԼՂՀ համանուն կառույցի գործընկերների ուղեկցությամբ պատվիրակության անդամներն այցելել են Ստեփանակերտի հուշահամալիր և իրենց հարգանքի տուրքը մատուցել

նահատակվածների հիշատակին, որից հետո կառավարության նիստերի դահլիճում տեղի է ունեցել համատեղ նիստ:

Բացելով այն՝ ԼՂՀ քաղծառայության խորհրդի նախագահ Բորիս Առուշանյանը նշեց, որ նման հանդիպումներն արդյունավետ կդարձնեն երկու կառույցների գործունեությունը և կնպաստեն իրենց առջև ծառայած խնդիրների լուծմանը: ՀՀ քաղծառայության խորհրդի նախագահ Մանվել Բադալյանն արցախյան իր գործընկերներին ներկայացրեց ընթացիկ և նախատեսվող օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև ծանոթացրեց մոտ ապագայում ակնկալվող բարեփոխումներին: Իննը տարի առաջ է ստեղծվել հայաստանյան կառույցը և այդ ամբողջ ընթացքում համակարգում իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում զարգացման շարժընթացն ակնառու է: Մ. Բադալյանի խոսքերով՝ ժամանակի հրամայականով այսօր կրկին կանգնել են բարեփոխումների շեմին, ինչը բնական, օրինաչափ երևույթ է: Նոր մեխանիզմների ու մոդելների ներդրման առումով սկզբունքորեն հետաքրքիր, կենսունակ լուծումներ ենք արդեն առաջադրում,- ասաց Մանվել Բադալյանը:- Մասնավորապես քաղաքացիական ծառայության մասին օրենքում վերջին փոփոխությունների ու լրացումների արդյունքում սկզբունքային մի քանի բարեփոխումներ ենք ունեցել, որոնք ըստ էության կենսունակ են: Ցանկացած փոփոխությունից առաջ մտավախություն ենք ունենում՝ արդյոք սա կօգնի, թե՞ կվնասի: Խոսքս մասնավորապես վերաբերում է հարցազրույցի փուլում գնահատման նոր մոդելին, երբ մրցույթի արդյունքում հաղթողների քանակը սահմանափակեցինք (առավելագույնը երեք բարձր միավորներ հավաքած անձինք են համարվում հաղթողներ) և դրա հետ կապված անցանք բալային գնահատման:

ՀՀ քաղծառայության խորհրդի նախագահի հավաստմամբ՝ գնահատման այս նոր մոդելը բարձրացնում է օբյեկտիվության մակարդակը՝ ի տարբերություն կողմ կամ դեմ քվեարկության: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետք է իր գնահատականը տա և այս դեպքում մրցույթին մասնակցող անձը եթե պատրաստ չէ և ոչնչով աչքի չի ընկնում՝ չի կարող բարձր միավոր վաստակել: Այսինքն նոր մոդելը, ըստ Մ.Բադալյանի, բարձրացնում է գնահատողի պատասխանատվության զգացումը:

Հաճախ քաղճառայության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելիս ունանք, այդ թվում նաև ԱԺ պատգամավորներ, առաջարկում են անցնել մեկ հաղթողի սկզբունքին, ինչի համար, սակայն, չեն շտապում հայաստանյան քաղճառայության համակարգի ներկայացուցիչները: Եվ դա ունի իր օբյեկտիվ պատճառաբանությունը. կառույցի ղեկավարի ներկայացմամբ՝ նշված առաջարկությունն ընդունելու դեպքում փաստորեն մարմինն զրկվում է ընտրելու հնարավորությունից, ինչը միաժամանակ մեծ պատասխանատվություն է ստեղծում քաղճառայության խորհրդի համար: Մենք ոչ թե խուսափում ենք, այլ դեռ պատրաստ չենք նման լրջագույն պատասխանատվության: Պետք է ստեղծել հնարավորություն՝ լավագույնին տարբերակելու համար: Այդ թվացյալ լծակը կամ գուցե իրական լծակը՝ մեզ չի հրապուրում, քանզի այն մեզ համար որևէ լուրջ առաջխաղացում կամ զարգացում ներկա պահին չի խոստանում,- ասաց Մ.Բադալյանը: ՀՀ քաղճառայության խորհրդի նախագահը կտրականապես մերժում է շրջանառվող այն կարծիքը, իբր, քաղճառայության մրցույթների արդյունքում լավ մասնագետը չի հաղթում: Իսկ ռուս են ավելի լավ մասնագետները... Եթե կան ավելի լավ մասնագետներ ու այդ մրցույթներին չեն մասնակցում՝ դա ուրիշ խնդիր է...:

Հայաստանյան կառույցի ղեկավարը մեծ հույսեր է կապում ՀՀ Նախագահին կից էթիկայի հանձնաժողովի ստեղծման հետ, որը կգործի 2012թ. հունվարի 20-ից: Այն բաղկացած կլինի 5 անդամից, որոնց կառաջադրեն ԱԺ նախագահը, վարչապետը (մեկական), Սահմանադրական դատարանի նախագահը, վճռաբեկ դատարանի նախագահը և գլխավոր դատախազը: Իսկ նրանց կնշանակի հանրապետության նախագահը՝ կոնկրետ ժամկետով: Շահերի բախման ու բացահայտման տեսանկյունից այն մեծ դերակատարություն կունենա: Եթե մարդը որևէ ոլորտում ունի մասնավոր ձեռնարկատիրական գործունեություն, հետաքրքրություն՝ նա չպետք է այդ ոլորտում ունենա լծակային տիրապետում, որովհետև առաջին հերթին նա այդ լծակները ծառայեցնելու է իր անձնական շահերին,- համոզված է Մ. Բադալյանը: Նման երևույթների պատճառով է՝ որ անջրպետ է առաջանում հասարակության և պետական պաշտոնյայի միջև: ՀՀ կառույցի ղեկավարի կարծիքով՝ պետք է փոխել շատերի մոտ ձևավորված պետական պաշտոնյայի կերպարը: Զգիտես ինչու, շատերին թվում է, թե պաշտոնյան պետք է լինի կոպիտ, անտաշ, լկտի, լպիրշ, գռեհիկ... Մենք պետք է կարողանանք վերացնել դա: Պաշտոնյան պիտի լինի համեստ (համեստը խեղճը չի), բարեսիրտ, բարեգութ, հոգատար, ուշադիր, պարզ, հասարակ, ազնիվ, շիտակ: Պետական ծառայողի մասնագիտական որակները դեռ բավարար չեն, որպեսզի նա զբաղեցնի հասարակության համար շատ տեսանելի պաշտոն,- ասաց Մանվել Բադալյանը:

Այս ամենի համար համակարգից մեծ ջանքեր են պահանջվելու, բայց, այնուամենայնիվ, փորձ է արվելու գտնել մարդու տեսակը չափելու, գնահատելու գործիքներ: Ինչո՞ւ է հասարակության մի հատվածն իր

պետությունից, իր հայրենիքից նեղվում, օտարանում, հիասթափվում՝ հարցնում է Մ.Բաղայանն ու ինքն էլ պատասխանում. մեզ ակնհայտ շատ պատճառներով, որոնցից մեկն էլ պետական չինովնիկի հետ հարաբերվելն է: Քաղճառայության մասին օրենքի վերջին փոփոխություններից մեկը կրտսեր խմբի պաշտոնների համալրման նոր մոդելի միտումն էր, որը քաղճառայության մասնագետների համոզմամբ՝ անչափ ճիշտ ու սկզբունքային է և հնարավորություն է ընձեռում ոչ միայն կրտսերների համալրումը կազմակերպել որակյալ մասնագետներով, այլև ձեռքագատվել կրտսեր պաշտոնները թափուր լինելու դեպքում դրանք ժամանակավորապես համալրելուց:

Մ.Բաղայանը խոսեց նաև մեկ այլ խնդրից՝ քաղճառայության աշխատողի աշխատավարձից: Այն գայթակղիչ ու հրապուրիչ չէ լավ մասնագետի համար, իսկ որակյալ մասնագետի պակաս, իրոք, զգացվում է: Մրցույթների 20 տոկոսում հաղթող չի լինում կամ պարզապես մասնակցության դիմում չի լինում: Գործազրկության պայմաններում սա զարմանալի երևույթ է և խորհրդի նախագահի բացատրությունը խորհելու տեղիք է տալիս: Մ. Բաղայանը համոզված է, որ երկու հայկական հանրապետությունների կառավարման համակարգերի քաղճառայողները տարեցտարի կլինեն ավելի բարեկիրթ, բանիմաց, արդարամիտ, խելացի և դրան անվերապահորեն ու քայլ առ քայլ հասնելու են: Առաջընթաց արձանագրելու նպատակով բարեփոխումները շարունակվելու են: Իսկ այդ գործում աջակիցներ են անհրաժեշտ: Ամենից կարևորն այն է, որ թե՞ հայաստանյան և թե՞ արցախյան կառույցներն իրենց աշխատակազմերով վստահ և համոզված լինեն իրենց գործի ճշմարտացիության ու կարևորության մեջ: Բացի այդ, հայաստանյան կառույցի ղեկավարը քաղճառայողի համար կազմակերպվող մրցույթների մասնակիցներին խորհուրդ է տալիս չհուսահատվել, լավատեսությամբ լցված համառորեն գնալ մինչև վերջնական հաղթանակ: Իսկ առաջիկայում՝ սեպտեմբեր ամսին Երևանում կանցկացվի քաղաքացիական ծառայության գծով միջազգային գիտաժողով, որին կմասնակցի շուրջ 15 երկիր, այդ թվում նաև՝ Արցախը: Նիստի ավարտին երկու հայկական հանրապետությունների քաղճառայությունների խորհուրդների ղեկավարները պատասխանեցին լրագրողների հարցերին:

Լաուրա Գրիգորյան

! Ազատ Արցախ՝ օրաթերթ

http://artsakhtert.com/arm/index.php?option=com_content&view=article&id=1301:2011-08-09-05-07-08